ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N2

ՀՀՏԿԵՆ ջրային կոմիտեի «Ջրառ» ՓԲԸ-ի կարիքների համար ՀՀՏԿԵՆՋԿ-Ջ-ԳՀԾՁԲ-20/5 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգով Ազատի ջրամբարի հատակային ջրթող կառուցվածքի ստորջրյա ջրառման հանգույցի ժամանակավոր անջրպետման աշխատանքների նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմման ծառայությունների գնահատող հանձնաժողովի հայտերի բացման և գնահատման նիստի

ք. Երևան 14 հուլիսի 2020թ.

ժամը. 15:30

Մասնակցում էին.

Հանձնաժողովի նախագահ՝	**Մ. Առաքելյան** (համակարգում՝ ԳՊ/ԳԱՊ Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ, գնահատման հանձնաժողովի ղեկավար)
Անդամներ՝	**Կ. Գրիգորյան** (համակարգում՝ ԳՊ/ԳԱ Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ) **Գ. Խոսրովյան** (համակարգում՝ ԳՊ/ԳԱ Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ) **Ա. Գևորգյան** (համակարգում՝ ԳՊ/ԲԱ Գնման Պատասխանատու/Բացման Աշխատակազմ) **Ն. Համբարձումյան** (համակարգում՝ ԳՊ/ԲԱ Գնման Պատասխանատու/Բացման Աշխատակազմ)
Հանձնաժողովի քարտուղար	**Կ. Բարսեղյան** (համակարգում՝ ԳՊ/ՄՀՄ՝ Գնման Պատասխանատու /Մրցույթի համակարգող)

1. Հայտերի բացման և գնահատման մասին

(Մ. Առաքելյան)

«ՀՀՏԿԵՆՋԿ-Ջ-ԳՀԾՁԲ-20/5» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգով Ազատի ջրամբարի հատակային ջրթող կառուցվածքի ստորջրյա ջրառման հանգույցի ժամանակավոր անջրպետման աշխատանքների նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմման ծառայությունների ձեռքբերման գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ ք. Երևան Վարդանանց փակուղի 8, 6-րդ հարկ հասցեում, 2020 թվականի հուլիսի 14-ին, ժամը 15:30-ին:

Գնահատող հանձնաժողովի նախագահը հայտարարեց նիստը բացված և հրապարակեց գնման հայտով ծառայությունների ձեռքբերման նախահաշվայի արժեքները.

Հ/հ	Գնման առարկայի անվանումը	Նախահաշվային գինը (ՀՀ դրամ)
1	Նախագծերի պատրաստում, ծախսերի գնահատում	5000000 (հինգ միլիոն)

Հայտերի բացումն իրականացվել է www.armeps.am էլեկտրոնային համակարգի միջոցով հրավերով սահմանված կարգով:

1.1.Հայտ ներկայացրած մասնակիցների անվանումը

«ՀՀՏԿԵՆՋԿ-Ջ-ԳՀԾՁԲ-20/5» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին www.armeps.am էլեկտրոնային համակարգի միջոցով հայտ է ներկայացրել հետևյալ մասնակիցը՝

Հ/Հ	Մասնակիցների անվանումը
1	«Հայջրնախագիծ Ինստիտուտ» ՓԲԸ

1.2 Տվյալներ բացված հայտում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության մասին:

Մասնակցի կողմից ներկայացված հայտում առկա են հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը:

Ընդունվել է որոշում՝ կողմ-5 դեմ-0

1.3 Տվյալներ մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին:

«Հայջրնախագիծ Ինստիտուտ» ՓԲ ընկերության կողմից ներկայացված փաստաթղթերը կազմվել և ներկայացվել են հրավերի պահանջներին համապատասխան:

Ընդունվել է որոշում՝ կողմ-5 դեմ-0

1.4 Մասնակցի առաջարկած գինը

Հ/Հ	Գնման առարկայի անվանումը	Արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը)	Ընդհանուր գին, ներառյալ ԱԱՀ
1	Նախագծերի պատրաստում, ծախսերի գնահատում	7100000 (յոթ միլիոն հարյուր հազար)	8520000 (ութ միլիոն հինգ հարյուր քսան հազար)

1.5 Հայտերի գնահատման մասին:

Գնահատող հանձնաժողովն ուսումնասիրեց մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերը և անհամապատասխանություններ չհայտնաբերեց: Մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված չէ գնումների գործընթացին իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Գնահատող հանձնաժողովը որոշեց մասնակցի հայտը գնահատել բավարար:

Ընդունվել է որոշում՝ կողմ-5 դեմ-0

1.6 Բանակցությունների մասին:

Քանի որ մասնակցի առաջարկած գները 1-ին չափաբաժնի մասով գերազանցում են գնման հայտով նախատեսված նախահաշվային գները, գնահատող հանձնաժողովը որոշեց մասնակցին հրավիրել բանակցությունների:

Ընդունվել է որոշում՝ կողմ-5 դեմ-0

1.7 «ՀՀՏԿԵՆՋԿ-Ջ-ԳՀԾՁԲ-20/5» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին:

Գնման ընթացակարգի վերաբերյալ հարցումներ և պատասխաններ չեն եղել:

Ընդունվել է որոշում՝ կողմ-5 դեմ-0

2.Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրվա, ժամի և վայրի մասին

(Մ. Առաքելյան)

Գնահատող հանձնաժողովը որոշեց՝

Գնահատող հանձնաժողովի հաջորդ՝ բանակցությունների վարման նիստ հրավիրել բանակցությունների վարման մասին ծանուցումն ուղարկելու օրվան հաջորդող երկրորդ աշխատանքային օրը ժամը, 11:00-ին ք. Երևան, Վարդանանց փակուղի 8, 6-րդ հարկ, հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ- 5, դեմ- 0

Հանձնաժողովի նախագահ՝ _____ Մ. Առաքելյան

Անդամներ՝ _____ Կ. Գրիգորյան

_____ Գ. Խոսրովյան

_____ Ա. Գևորգյան

_____ Ն. Համբարձումյան

Հանձնաժողովի քարտուղար _____ Կ. Բարսեղյան